

պտղովք, եւ չորրորդն¹ ի նոսա, զոր կիսաչափ ըստ հասարակութեան երիցն եւ պակասաւոր ըստ պտղաբերութեանն² տեսեր, որոց³ չորեցունց պտուղքն վտիտք էին եւ թառամք, եւ բերքն պակասք եւ աննմանք քան զայլ ատոբատեսիլ պտուղս⁴ ձիթենւոյն - արդ ամփոփեա՛ զունկնդրութիւն մտաց քոց, լուր եւ ասացից քեզ⁵՝ զոր ինչ սահմանեացն⁶ Բարձրեալն. յայսմ հետե մինչեւ ի վախճան աշխարհիս՝ երեք տեսներեակք ամաց⁷ եւ կէս տասներեկի համառատեսցի ի վերայ ամենայն աշխարհի, մինչեւ յերեւումս պղծոյն անապատի, զոր Դանիէլ մարգարէի ասացեալ է սուրբ Յոզուէն⁸. եւ լինին սոքա յայտնապէս թուով ամբ երեք հարիւր յիսուն, ըստ միագոյգ պտղոց երից ոստոցն եւ կիսոյն⁹: 49 եւ զի տեսեր զպտուղ ոստոցն թառամս եւ ծնկեալս եւ ոչինչ բնաւ նմանս ա՛յլ պտղոցն որ ի ձիթենւոցն էին. տե՛ս ճշգրտապէս եւ ծանի՛ր, զի բարձեալ է սեր եւ արդարութիւն յամենայն մարդոց¹⁰, որք ստութեամբ եւ ոչ ստուգութեամբ կարծեցուցանեն զանձինս սիրունս¹¹ եւ պատուիրանապահս. եւ այն յայտնի գրեալ կայ եւ կնքեալ ի դպրութեան¹² ամենագիտին Աստուծոյ, որ ներե երկայնմտութեամբ եւ հատուցանէ անաչառութեամբ:

50 «Եւ ընդ ահեկէ բեմբին որ ցուցաւ քեզ աթոռ չորեքլուսի ծովագոյն սառնակերպ՝ զնստումս զահու քահանայութեանն¹³ եւ թագաւորութեանն ցուցանէ, զոր արդարեւ Բանն Աստուած¹⁴ հաստատէ: 51 Յորոյ վերայ կայր սկուտեղն¹⁵ արծաթի. քանզի իբրեւ զարծաթ ընտիր եւ փորձ լուսափայլ՝ յամենայն ազգս¹⁶ ընդունողաց սփռեալ տարածեցաւ բանն. զոր եւ սաղմոսերզն¹⁷ վարդապետե սուրբ Յոզուովն¹⁸, յասելն, թէ *Բանք Տեառն որպէս*

1 ԲԳտ. զչորրորդն

2 Ձ. պակասաւորութեան ըստ պտղ...

3 ԲԳտ. յորոց

4 Ատ. պտուղք

5 ԲԳտ. չիք քեզ

6 Ձ. զոր սահմանեաց

7 ՁԱտ. երեքտասան երեք ամաց

8 ՁԱտ. զոր ի Դանիէլէ մարգարէի կամ ի սուրբ Յոզուէն...

9 Ձ. ըստ միագոյգ պտղոյն երից ոստոցն եւ պտղոց եւ կիսոց. Ատ. ... երից ոստոցն եւ պտղոց եւ կիսոյն

10 Ձ. մարդոյ

11 ՁԱտ. սիրուն

12 ՁԱտ. ի դպրութիւն

13 ՁԱտ. զնստել քահանայութեան

14 Ձ. զարդարեւ բանն աստուծոյ. Ատ. զոր արդարեւ բանն աստուծոյ

15 ԲԳտ. սկտեղն

16 Ձ. ազգ

17 ՁԱտ. սաղմոսերզուն

18 Ձ. սուրբ հոգւոյն. Ատ. ի սուրբ հոգւոյն